ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Անուն Ազգանուն**

   Անահիտ Ավանեսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

   ՀՀ առողջապահության նախարարի պաշտոնակատար

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

   Հունաստանի Հանրապետություն, Աթենք, 2021 թ. հուլիսի 22-23

4. **Հրավիրող կողմը**

   Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) Եվրոպական տարածաշրջանի գրասենյակ, Հունաստանի Հանրապետության կառավարություն

5. **Գործուղման նպատակը**

   Մասնակցություն բնակչության հոգեկան առողջության և ծառայությունների մատուցման համակարգի վրա COVID-19 համավարակի ազդեցության վերաբերյալ ԱՀԿ Եվրոպական տարածաշրջանի գագաթնաժողովին

6. **Քննարկված թեմաները**

   Միջոցառման ընթացքում քննարկվեցին COVID-19 համավարակի համատեքստում հոգեկան առողջության պահպանմանն ուղղված կարևորագույն հարցեր, այդ թվում՝ հասարակության՝ համաճարակից հետո վերականգնման, նախկին համակարգերի բարելավման և առողջապահական համակարգի խափանումների հետևանքների հաղթահարմանն ուղղված խնդիրներ: Հանդիպման շրջանակում հատուկ անդրադարձ է կատարվել կորոնավիրուսային հիվանդության պատճառով դպրոցների փակման

հետևանքով երկարատև մեկուսացման ազդեցությունը երեխաների և դեռահասների վրա խնդրին:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Նախարարի պաշտոնակատարը իր ելույթում նշել է, որ COVID-19 համավարակի առաջին ամիսներին Հայաստանում հայտարարվել է լոքդաուն, ինչի արդյունքում մարդկանց առանձին խմբեր, անհատներ մեկուսացվել են: Բնականաբար, նմանատիպ միջոցառումներն այդ փուլում անհրաժեշտ և միակ միջոցն էին պայքարելու վիրուսի տարածման դեմ: Սակայն, հասկանալի է նաև, որ մարդկանց մեկուսացումը չէր կարող իր բացասական ազդեցությունը չթողնել հոգեկան առողջության վրա: Այդ ընթացքում առողջապահության համակարգն առերեսվել է մի շարք խնդիրների հետ. բնակչության հարաճուն տագնապներ, լարվածություն, համավարակի հետագա զարգացման վատագույն սցենարների սպասումներ, և այլն:

«COVID-19 համավարակի հայտարարման առաջին իսկ ամիսներից արձանագրվել է հոգեբանական և հոգեբուժական ծառայությունների անհրաժեշտության զգալի աճ: Հայաստանում հոգեբանական անվճար աջակցություն են ստացել վերապրոֆիլավորված հիվանդանոցներում բուժվող քաղաքացիները, բուժաշխատողները, ինչպես նաև առավել խոցելի խմբերում ընդգրկված անձինք: Առանձնահատուկ ուշադրության կենտրոնում են գտնվել հոգեկան առողջության կենտրոններում բուժվող, խնամքի մեջ գտնվող պացիենտները»,- ասել է Անահիտ Ավանեսյանը՝ հավելելով, որ 2020 թվականի մայիս-հունիսին իրականացված հետազոտության արդյունքները հաստատել են նախնական մտավախությունները և փաստել, որ բնակչության 40%-ի մոտ, կորոնավիրուսի տարածման հետ կապված, առկա է միջին և ծանր աստիճանի սթրես, ինչպես նաև սոմատիզացված հոգեբանական խնդիրներ են հայտնաբերվել բնակչության 20%-ի մոտ:

Հատկանշական է Առողջապահության համաշխարհային կազմակերպության տարածաշրջանային գրասենյակի տնօրեն Հանս Կլյուգեի հետ հանդիպումը, որի ընթացքում կողմերն անդրադարձան փոխգործակցության ցանկալի և

առաջնահերթ ուղղություններին, մասնավորապես՝ առողջության ապահովագրության համակարգի ներդրմանը, առողջության առաջնային պահպանման օղակների (պոլիկլինիկական ծառայության) գործունեությանը: Հանդիպման առանցքային կետերից էին կորոնավիրուսային համավարակով պայմանավորված՝ Հայաստանում տարվող պատվաստումային աշխատանքները և պատվաստանյութերի՝ թե՛ հումանիտար օգնության շրջանակում, թե՛ ձեռքբերման հնարավոր տարբերակներին առնչվող հարցերը: Նախարարի պաշտոնակատարը, ներկայացնելով Հայաստանում տարվող պատվաստումային գործընթացը և, պայմանավորված ազգաբնակչության զանգվածային պատվաստման անրաժեշտությամբ, պատվաստանյութերի՝ մարդասիրական օգնության շրջանակում լրացուցիչ խմբաքանակներ ստանալու, ինչպես նաև գնման եղանակով ձեռքբերելու անհրաժեշտությունը, ընդգծեց պատվաստանյութերի ինչպես հնարավոր տարատեսակության ապահովման, այնպես էլ վերջիններիս ժամանակին մատակարարման կարևորությունը՝ կապված պիտանիության ժամկետների կարճ տևողությամբ:

Նախարարի պաշտոնակատարն անդրադարձավ նաև փոխատվության սկզբունքով պատվաստանյութերի տրամադրմանը, որի դեպքում մի երկիրը մյուս կողմին ժամանակավոր տրամադրում է պատվաստանյութ՝ տվյալ երկրում օգտագործման պայմանով, իսկ վերջինս պարտավորվում է համապատասխան չափով պատվաստանյութը վերադարձնել նախատեսված ժամկետում՝ այդկերպ երկրների միջև ապահովելով պատվաստանյութերի ակտիվ շրջանառություն, միաժամանակ լուծելով մի երկրում պատվաստանյութերի ավելցուկի, իսկ մյուսում՝ բացակայության խնդիրը:

Հանս Կլյուգեն հայտնեց իր գոհունակությունը Հայաստանի առողջապահության ոլորտում ներկայում տարվող բարեփոխումների վերաբերյալ՝ առանձնակի կարևորելով շոշափելի ձեռքբերումներն ու կյանքի կոչված ծրագրերի արդյունավետ գործարկումը:

8. Հանդիպման կամ նիստերի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

ԱՀԿ տարածաշրջանային ղեկավար Հանս Կլյուգեի հետ կայացած հանդիպմանը որոշում կայացվեց հետագայում կազմակերպել ավելի ինտենսիվ բնույթի աշխատանքներ և հանդիպումներ, որոնց շրջանակում գործարկվելու են բազմաթիվ հետաքրքիր ծրագրեր՝ միտված բնակչության առողջության բարելավմանը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

26 հուլիսի, 2021 թ.

Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157